Դատական ծախսերը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը և վճարման կարգը սահմանվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9.4 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես օրենքով սահմանված պետական տուրք՝ Հայցվորի կողմից նախապես վճարվել է 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև այն, որ հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 194-րդ հոդվածներով, 234.12-րդ հոդվածի 1-ին մասով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1/. «ՎԳ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի՝ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակից ներառելու մասին»՝ Մեծամոր համայնքի ղեկավարի 05.09.2022 թվականի թիվ 1549 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի 05.09.2022 թվականի թիվ 1549 որոշումը՝ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակից ներառելու մասին», ճանաչել անվավեր:

2/. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքից հօգուտ «ՎԳ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել

50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից կատարված դատական ծախսի փոխհատուցում:

3/. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Կամովին չկատարվելու դեպքում, կատարում ենթադրող մասով վճիռը կարող է կատարվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Դատավոր՝ Հովհաննես Ղազարյան